Տեղեկանք

ՀՀ Շիրակի մարզի ք.Մարալիկի թվով 9 կիսակառույց բազմաբնակարան շենքերի կառուցման վերաբերյալ

ՀՀ Շիրակի մարզի ք.Մարալիկի թվով 9 կիսակառույց բազմաբնակարան շենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակվել են <<Երանգ>> ՍՊ ընկերության կողմից 2008 թվականին:

Օբյեկտի նախահաշվային արժեքը կազմում է 1118.0 մլն. դրամ գումար: Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված են մեկ սենյականոց բնակարաններ:

Նշված շենքերի արտաքին և ներքին գազամատակարարման ու ջեռուցման համար մշակված են առանձին նախագծանախահաշվային փաստաթղթեր,համաձայն որի այդ աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 228.67 մլն դրամ, տարածքի բարեկարգումը՝ 106.9 մլն դրամ:

ՀՀ 2009-2011 թվականների ընթացքում ՀՀ պետական բյուջեներով իրականացվել են ընդամենը 396.3 մլն. դրամ գումարի շինարարական աշխատանքներ և արդյունքում 2009 թվականին ավարտվել է թիվ 33 շենքը /15 բնակարանով՝ 100.1 մլն.դրամ/, 2010 թվականին թիվ 34 շենքը /20 բնակարանով՝ 140.2 մլն.դրամ/ և 2011 թվականին՝ թիվ 25 շենքը /24 բնակարանով՝ 156.0մլն.դրամ/ :

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների շրջանակներում իրականացվել են ամբողջ բնակելի թաղամասի արտաքին գազամատակարարման ցանցը և այդ ցանցից թիվ 33, թիվ 34 շենքեր մտնող գազամատակարարման ցանցերի կառուցման աշխատանքները, ինչպես նաև այդ շենքերի ջեռուցման և տաք ջրամատակարարման ցանցերը:

ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 1586-Ն որոշմամբ նախատեսված 27.2 մլն.դրամի շրջանակներում՝ <Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն> ծրագրի ներքո իրականացվել են թիվ 25 բնակելի շենքի ներքին ջեռուցման, արտաքին և ներքին գազամատակարարման, տաք ջրամատակարարման աշխատանքները:

Յուրաքանչյուր բնակարանում տեղադրվել է ջեռուցման կաթսա և գազօջախ, սանհանգույցները ամբողջությամբ սալիկապատված են, բնակարանի հատակները՝ լինոլեումից:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված 250.0 մլն.դրամ գումարի շրջանակներում կիրականացվեն անավարտ թիվ 26 /15 բնակարանով/ և թիվ 28 /24 բնակարանով/ բնակելի շենքերի ավարտման աշխատանքները:

Նախկինում ավարտված թիվ 33, թիվ 34, թիվ 25 և 2012 թվականին ավարտվող թիվ 26 շենքերը ունեն մեկ ընդհանուր բակ, որի բարեկարգման և կանաչապատման աշխատանքների համար համաձայն բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կպահանջվի 15 մլն.դրամ գումար: